ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 31-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. 2021 թվականի փետրվարի 8-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2021 թվականի փետրվարի 3-ի «Գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելու համար ՀՀ սահմանադրական դատարան դիմելու և դատական գործի վարույթը կասեցնելու մասին» ԵԴ/0496/01/20 քրեական գործով որոշումը:

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը դիմել է Սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 31-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը որոշելու համար:

Ըստ դիմողի՝ սույն գործով վիճարկվող դրույթի իրավակարգավորումից հետևում է, որ, եթե դատավարության մասնակիցները դատարանին ներկայացնում են գործով վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու միջնորդություն, ապա դատարանը կայացնում է այդ միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին որոշում, որը կարող է բողոքարկվել վերադաս դատարան:

Դիմողը նշում է, որ Օրենսգրքի «376.1 հոդվածի 8-րդ կետի և 31-րդ հոդվածի 3-րդ մասի համադրված վերլուծությունից բխում է, որ գործով վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ դատավարության մասնակցի միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը ենթակա է վերաքննության կարգով բողոքարկման»:

Դիմողը գտնում է, որ վերոհիշյալ իրավակարգավորումների արդյունքում.

«ա) վերաքննիչ դատարանը, ըստ էության, պետք է իրականացնի սահմանադրական արդարադատության գործառույթ, քանի որ պետք է քննության առարկա դարձնի նորմատիվ ակտի վիճարկվող դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու կամ չհակասելու հանգամանքի առնչությամբ առաջին ատյանի դատարանի դիրքորոշման իրավաչափությունը, ինչն էլ իր հերթին անխուսափելի է դարձնելու վերաքննիչ դատարանի կողմից նորմատիվ ակտի վիճարկվող դրույթի սահմանադրականության գնահատումը.

բ) վերաքննիչ դատարանը կարող է չարդարացված կերպով սահմանափակել առաջին ատյանի դատարանի ներքին անկախությունը և ըստ էության միջամտել առաջին ատյանի դատարանի կողմից քրեական գործի քննության բնականոն ընթացքին: Այս առումով հատկանշական է, որ վերաքննիչ բողոքի քննության ընթացքում հիմնական քրեական գործը շարունակելու է գտնվել առաջին ատյանի դատարանի վարույթում և վերաքննիչ դատարանի կայացրած որոշումը կարող է ուղղակիորեն ազդել հիմնական քրեական գործի քննության բնականոն ընթացքի վրա: Ավելին՝ եթե առաջին ատյանի դատարանը կայացրած լինի գործով վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ դատավարության մասնակցի միջնորդությունը մերժելու մասին որոշում, իսկ վերաքննիչ դատարանը անհամաձայնություն արտահայտի այդ որոշմանը, ապա վերաքննիչ դատարանը պետք է ՀՀ սահմանադրական դատարան դիմի մի գործով, որը գտնվում է ոչ թե իր, այլ առաջին ատյանի դատարանի վարույթում»:

Վերոգրյալի հիման վրա դիմողը գտնում է, որ սույն գործով վիճարկվող դրույթն այնքանով, որքանով նախատեսում է գործով վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ դատավարության մասնակցի միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման վերաքննիչ

բողոքարկման հնարավորություն, առերևույթ հակասում է Սահմանադրության 164, 168 և 169-րդ հոդվածների պահանջներին:

3. Պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Սահմանադրության 164, 168 և 169-րդ հոդվածների պահանջներին:

Վերլուծելով սույն գործով վիճարկվող դրույթը, Օրենսգրքի վերաբերելի այլ դրույթները, վկայակոչելով «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի համապատասխան դիրքորոշումը՝ պատասխանողը նշում է, որ առաջին ատյանի դատարանը, կայացնելով գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ դատավարության մասնակցի միջնորդությունը մերժելու մասին որոշում, գտնում է, որ իր վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ առկա չեն հիմնավոր կասկածներ և/կամ տվյալ գործի լուծումը հնարավոր է առանց այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման, ինչն ընդգծում է դատարանի անկախությունը, ուստի նման որոշումը ենթակա չէ վերանայման վերադաս դատական ատյանի կողմից:

Ըստ պատասխանողի՝ Օրենսգրքի 31-րդ հոդվածի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ բողոքարկման հնարավորությունը նախատեսված է այն դեպքերի համար, երբ Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ դատավարության մասնակցի միջնորդությունը բավարարվել է առաջին ատյանի դատարանի կողմից: Ըստ պատասխանողի՝ նշվածը համահունչ է Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մարտի 17-ի ԵԴ/0253/01/19 քրեական գործով կայացրած որոշմամբ արտահայտած դիրքորոշմանը:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

4.1. Նախ՝ Օրենսգրքի վերաբերելի իրավակարգավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրը սահմանել է ինչպես քրեական գործով վարույթի կասեցման, դրա հիմքերի, այնպես էլ գործով վարույթը կասեցնելու որոշումների բողոքարկման հետ կապված կարգավորումներ:

Օրենսգրքի 31-րդ հոդվածով, մասնավորապես, սահմանվում է, որ.

ա) քրեական գործով վարույթը դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդության հիման վրա դատարանի որոշմամբ կարող է կասեցվել, եթե դատարանը գտնում է, որ կիրառման ենթակա օրենքը կամ այլ իրավական ակտը հակասում է Սահմանադրությանը: Այս դեպքում դատարանն իրավունք ունի կասեցնել գործի վարույթը և դիմել Սահմանադրական դատարան (2-րդ մաս),

բ) այս հիմքով գործի վարույթը կասեցնելու՝ դատավարության մասնակիցների միջնորդությունները բավարարվում կամ մերժվում են դատարանի որոշմամբ, որը կայացման պահից տասնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերադաս դատարան (3-րդ մաս),

գ) քրեական գործով վարույթը կարող է կասեցվել անհրաժեշտ հնարավոր բոլոր դատավարական գործողությունները կատարելուց հետո (4-րդ մաս):

Օրենսգրքի 376.1-ին հոդվածով, ի թիվս այլնի, սահմանվում է, որ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են առաջին ատյանի դատարանների՝ գործով վարույթը կասեցնելու որոշումները (1-ին մասի 3-րդ կետ):

Այս առումով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով դիմողն իր վերլուծությունները բխեցրել է վկայակոչելով ոչ թե Օրենսգրքի հիշյալ՝ 376.1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, այլ Օրենսգրքի 376.1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը (վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ դատական ակտեր):

Օրենսգրքի «Դատական քննության ընդհանուր պայմանները» վերտառությամբ 41-րդ գլխում զետեղված 313-րդ հոդվածով, ի թիվս այլնի, սահմանվում է, որ գործը կասեցնելու մասին որոշումը պետք է շարադրված լինի առանձին փաստաթղթի ձևով (2-րդ մաս):

Համեմատական վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենսդիրը գործով վարույթի կասեցման, դրա հիմքերի, գործով վարույթը կասեցնելու որոշումների բողոքարկման հետ կապված համանման և առանձնահատուկ կարգավորումներ սահմանել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով: Մասնավորապես.

ա) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածով սահմանվում է, որ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե դատարանը Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում որոշել է դիմել Սահմանադրական դատարան (1-ին մասի 8-րդ կետ): Նույն օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանվում է, որ գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումները գործին մասնակցող անձինք կարող են բողոքարկել հիշյալ օրենսգրքով սահմանված կարգով (2-րդ մաս), իսկ 361-րդ հոդվածով սահմանվում է, որ վերաքննության կարգով բողոքարկման են ենթակա առաջին ատյանի դատարանի, ի թիվս այլ որոշումների, նաև գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումները (1-ին մասի 5-րդ կետ),

բ) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածով սահմանվում է, որ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե դատարանը «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով սահմանված կարգով դիմել է Սահմանադրական դատարան (1-ին մասի 5-րդ կետ): Նույն օրենսգրքի 131-րդ հոդվածով սահմանվում է, որ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են վարչական դատարանի, ի թիվս այլ միջանկյալ դատական ակտերի, նաև գործի վարույթը կասեցնելու մասին դատական ակտերը, բացառությամբ օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքի (1-ին մասի 10-րդ կետ):

4.2. Սահմանադրական դատարանն սույն գործով իրականացրել է (սկսած 2018 թվականի ապրիլի 9-ից) քրեական, քաղաքացիական և վարչական գործերով վարույթները կասեցնելու և այդ որոշումները բողոքարկելու, Սահմանադրական դատարան դիմելու դատական պրակտիկայի ուսումնասիրություններ:

ՀՀ դատական դեպարտամենտը 2021 թվականի մայիսի 14-ի N ԴԴ-1 Ե-3650 գրությամբ Սահմանադրական դատարանին է տրամադրել տեղեկատվություն, համաձայն որի՝ «... կատարված ուսումնասիրությունների արդյունքում քաղաքացիական և վարչական գործերով առաջին ատյանի դատարանների կողմից վարույթը կասեցնելու և Սահ-

մանադրական դատարան դիմելու մասին որոշումներով վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկումների վերաբերյալ տեղեկատվություն չի հայտնաբերվել»:

Վերոհիշյալ գրության համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից քրեական գործերով վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու մասին միջնորդությունների հիման վրա ընդունված որոշումների վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկումների վերաբերյալ առկա է հետևյալ տեղեկատվությունը.

ա) թվով 3 վերաքննիչ բողոք մերժվել է (թիվ ՍԴ/0102/01/17, թիվ ՇԴ3/0002/01/17, թիվ ԵԴ/0036/01/18 քրեական գործեր),

բ) թվով 1 վճռաբեկ բողոքի վարույթ ընդունելը մերժվել է (թիվ ԵՇԴ/0165/01/16 քրեական գործ),

գ) թվով 4 վերաքննիչ բողոք թողնվել է առանց քննության (թիվ ԼԴ1/0026/01/17, թիվ ԵՇԴ/0165/01/16, թիվ ԵԴ/0253/01/19, թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործեր),

դ) թվով 1 վերաքննիչ բողոք բավարարվել է (թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործ),

ե) թվով 1 վճռաբեկ բողոք բավարարվել է մասնակիորեն (թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործ):

Ինչպես վերոհիշյալ գործերով կայացված որոշումների, այնպես էլ քրեական, քաղաքացիական, վարչական գործերով վարույթները կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու որոշումների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դատական պրակտիկան միատեսակ չէ: Մասնավորապես,

ա) դատարանների կողմից (քրեական, քաղաքացիական և վարչական գործերով) կայացվել են ինչպես գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու մասին միասնական որոշումներ, այնպես էլ գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու մասին առանձին որոշումներ,

բ) միասնական որոշումներում (քրեական, քաղաքացիական և վարչական գործերով) մի մասի դեպքում դատարաններն ամրագրել են նախ՝ գործի վարույթը կասեցնելու, այնուհետև՝ Սահմանադրական դատարան դիմելու մասին, իսկ մի մասի դեպքում՝ հակառակը,

գ) միասնական որոշումներում հիմնականում (առանձին դեպքերը՝ ստորև) բացակայում է տվյալ որոշման բողոքարկելիության վերաբերյալ ամրագրումը,

դ) արձանագրվել են առանձին դեպքեր (քրեական և քաղաքացիական գործերով), երբ միասնական որոշումներում դատարաններն ամրագրել են, որ տվյալ որոշումը ենթակա է բողոքարկման՝ առանց տարանջատելու որոշման Սահմանադրական դատարան դիմելու մասը,

ե) արձանագրվել են առանձին դեպքեր (քաղաքացիական և վարչական գործերով), երբ միասնական որոշումներում դատարաններն ամրագրել են, որ տվյալ որոշումը ենթակա է բողոքարկման՝ գործի վարույթը կասեցնելուն վերաբերող մասով:

Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովում է Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով: Իսկ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաընկալման հետևանքով:

4.3. Սահմանադրական դատարանն իր՝ 2019 թվականի հունվարի 25-ի ՍԴԱՈ-7 աշխատակարգային որոշմամբ արտահայտել է, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա) որպես Սահմանադրության գերակայության ապահովման միջոց՝ **Սահմանադրության վերջնական և համապարտադիր մեկնաբանությունն ու կիրառումը** Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է,

բ) եթե դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով հանգում են կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության խնդրի, այսինքն՝ այդ կապակցությամբ առաջանում են հիմնավոր կասկածներ, և եթե տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով, ապա դատարանները **պարտավոր են** դիմել Սահմանադրական դատարան այդ

ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով, ինչը նշանակում է, որ **բոլոր դատարանները, այլ ոչ միայն Վճռաբեկ դատարանը, պետք է ինցիդենտ կերպով ստուգեն կիրառվելիք նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը** և պարտավոր են դիմել Սահմանադրական դատարան՝ նշված նախադրյալների առկայության դեպքում,

գ) Սահմանադրական դատարանն ինքն է վերջնարդյունքում ապահովում Սահմանադրության միատեսակ կիրառությունը՝ իր լիազորությունների շրջանակներում լուծում տալով Սահմանադրության մեկնաբանության առնչությամբ առաջացած բոլոր վեճերին: Սահմանադրական արդարադատության էությունը կարող էր նենգափոխվել կամ այդ արդարադատության արդյունավետությունը կարող էր նվազել, եթե Սահմանադրության մեկնաբանության և կիրառման հետ կապված վեճերի **վերջնական** լուծումը վերապահված լիներ հանրային իշխանության մեկ այլ մարմնի:

Սույն գործի շրջանակներում ևս Սահմանադրական դատարանը վերահաստատում է վերոհիշյալ իրավական դիրքորոշումները:

Միաժամանակ վկայակոչելով Սահմանադրության 167-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի՝ Սահմանադրական դատարանի գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և Սահմանադրական դատարանի մասին օրենքով, ինչպես նաև Սահմանադրության 169-րդ հոդվածի 6-րդ մասը, համաձայն որի՝ Սահմանադրական դատարան դիմելու կարգի մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով, Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ սահմանադրական հիշյալ կարգավորումների նպատակը, ըստ էության, **որևէ այլ օրենքով, այդ թվում՝ քրեական, վարչական և քաղաքացիական դատավարական որևէ ընթացակարգով սահմանադրական արդարադատության իրականացման տիրույթը հատելը, այն սահմանափակելը բացառելն է:**

4.4. Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում են Սահմանադրական դատարան, եթե հիմնավոր կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և

գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն ամրագրվել է նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասով: Իսկ հիշյալ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանը պետք է հիմնավորի իր դիրքորոշումը նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ գործի լուծումը հնարավոր է միայն վիճարկվող դրույթի կիրառման միջոցով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են նույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր, որոնցից են, ի թիվս այլնի՝ դիմողի՝ տվյալ հարցով Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու չլինելը (1-ին մասի 2-րդ կետ):

Սույն գործով դիմողի հիմնավորումներից հետևում է, որ դրանք առավելապես վերաբերելի են կոնկրետ գործի լուծման համար կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի դրույթի իրավական բովանդակության բացահայտման, մեկնաբանման և կիրառման, այլ ոչ սահմանադրականության հարցերին:

Սահմանադրական դատարանը բազմիցս իր որոշումներով արձանագրել է, որ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի, վերջիններիս որևէ դրույթի իրավական բովանդակության բացահայտման և միատեսակ կիրառության ապահովման իրավասությունը Սահմանադրությամբ և օրենքով վերապահված է եռաստիճան դատական համակարգին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործով կայացրած որոշմամբ (ի դեպ, հիշյալ որոշումը ՀՀ դատական դեպարտամենտի 2021 թվականի մայիսի 14-ի ԴԴ-1 Ե-3650 գրությամբ ներկայացրած ժամանակագրական առումով վերջին դատական ակտն է) արտահայտել է իրավական դիրքորոշումներ՝ գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական

դատարան դիմելու դատարանի որոշման իրավաչափության ստուգման, դատական վերանայման ծավալի վերաբերյալ:

Հարկ է նշել նաև, որ վերոհիշյալ որոշումը ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է 2021 թվականի մարտի 17-ին, այսինքն՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա սույն գործը Սահմանադրական դատարանի կողմից 2021 թվականի փետրվարի 26-ի ՍԴԱՈ-39 աշխատակարգային որոշմամբ քննության ընդունելուց հետո:

ՀՀ վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշմամբ, ըստ էության, անդրադարձ է կատարվել նաև սույն գործով բարձրացված հարցերին:

Սույն գործով դիմողը, այդ թվում՝ իր 2021 թվականի մարտի 17-ի ԴԴ-8-Ե-9805/21 գրավոր բացատրությամբ, չի անդրադարձել իրավակիրառ պրակտիկայի մեկնաբանության սահմանադրականության հարցերին: Դրանք սույն գործով քննության առարկայի շրջանակից դուրս են:

Հաշվի առնելով վերոշարադրյալը և հիմք ընդունելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, ինչպես նաև 71-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը՝ Սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

22 հունիսի 2021 թվականի
ՍԴԱՈ-122